Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 22-ի N 334 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 – 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԱՍ-ՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ԱԽՏՈՐՈՇԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱՀԱՆԻՉՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսության կայուն զարգացման գործում մեծ նշանակություն ունի անասնաբուժության ոլորտը:

2. Աշխարհի բոլոր պետությունների համար համընդհանուր խնդիր է կենդանիների վարակիչ, այդ թվում՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր (զոոանտրոպոնոզ) հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպումը:

3. Ելնելով հարևան երկրներում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների բարդ համաճարակային և հանրապետության առանձին մարզերի կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակից, ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հանրապետությունում անասնահամա-ճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով ամեն տարի իրա-կանացվում են հակաանասնահամաճարակային միջոցառումներ գյուղատնտեսական կենդանիների (այսուհետ՝ գ/կ) բրուցելյոզ, խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ԽԵԿ) տուբերկուլյոզ, ԽԵԿ գ/կ սիբիրախտ, մանր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ՄԵԿ) բրադզոտ, ԽԵԿ և ՄԵԿ դաբաղ, ԽԵԿ պաստերելյոզ, խշխշան պալար, խոզերի դասական ժանտախտ, թռչունների Նյու-Քասլ և մեղուների վարրոատոզ հիվանդությունների կանխար-

գելման համար: Վերջին 3 տարիների ընթացքում պետական պատվերի շրջանակներում իրականացված պատվաստումների արդյունքում ինֆեկցիոն հիվանդություններ չեն արձանագրվել:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Ծրագրի նպատակը՝ համաձայն ժամանակացույցի, անհրաժեշտ չափաբաժիններով անասնաբուժական պատրաստուկների, ախտորոշիչ միջոցների և ախտահանիչների ապահովումն է:

5. Ծրագրի խնդիրը՝ համաձայն ժամանակացույցի, սահմանված չափաբաժիններով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ախտորոշիչ միջոցների, ախտահանիչների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված կենսապատրաստուկների ձեռքբերումն է:

III. ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ

6. Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների անասնաբուժական պատրաստուկների, ախտորոշիչ միջոցների և ախտահանիչների ձեռքբերման ծրագրի իրականացման համար պահանջվում է շուրջ 1470000 հազ. դրամ, յուրաքանչյուր տարի շուրջ 490000,0 հազ. դրամ (հաշվարկները կատարվել են 2011 թվականին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից տրված տվյալների հիման վրա, յուրաքանչյուր տարվա բյուջետային հայտի ներկայացման ժամանակ աղյուսակում կկատարվեն կենդանիների գլխաքանակների տվյալների փոփոխություններ):

NN ը/կ	Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	Միջոցառման անվանումը	Դասավանդության և ախտորոշիչների անվանումները	Միավորի գինը	Ծախսվող պատվաստանյութի և ախտորոշչի քանակը (դոզա/մլ-լիտր)	Պլանավորում ընդամենը (2012-2014 թթ.)		
						պահանջվող ախտորոշիչ միջոցների և պատվաստանյութի քանակը	հետազոտումների և պատվաստումների քանակը	գումարը
Գյուղատնտեսական կենդանիների շճաբանական և ալերգիկ հետազոտություն								
1.	ԽԵԿ	բրուցելյոզի նկատմամբ արյան շճաբանական հետազոտություն (առաջնային)	Ռոզ-Բենգալ հակածին	156.60	0.03	5777.2	272572	904703
2.		բրուցելյոզի նկատմամբ արյան շճաբանական հետազոտություն (կրկնակի)	Ռոզ-Բենգալ հակածին	156.60	0.03	8177.2	272572.0	1280543.0
3.		տուբերկուլինիզացիա (առաջնային)	տուբերկուլյոզի ալերգիկ ախտորոշման տուբերկուլին	41.84	1.00	172749.2	272572	7227824.9
4.	ՄԵԿ	բրուցելյոզի նկատմամբ արյան շճաբանական հետազոտություն	Ռոզ-Բենգալ հակածին	156.60	0.015	5750.5	383367	900529
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումներ								
5.	ԽԵԿ	պատվաստում սիբիրախտի նկատմամբ	55 շտամի կենդանի, թուլացված պատվաստանյութ	14.3	1.00	1034497.2	1007473	14793309.8
6.		պատվաստում պաստերելյոզի նկատմամբ	պաստերելյոզի նկատմամբ կիսահեղուկ, հիդրոքսիդալյումինային ֆորմոլ պատվաստանյութ	6.38	15.00	1,485,348.1	122,029	9,476,520.6
7.		պատվաստում դաբաղի նկատմամբ	հակադաբաղային «Ա», «Օ», «Ասիա-1» տիպերի եռավալենտ պատվաստանյութ	221.44	1.00	1,590,694.6	1,796,888	352,243,421

8.		պատվաստում խշխշան պալարի նկատմամբ	խշխշան պալարի դեմ խտացված հիդրոքսիդ-ալյումինային պատվաստա-նյութ	90	2.0	2,149,893.2	1,033,686	19,349,038.4
9.		պատվաստում դաբաղի նկատմամբ	հակադաբաղա-յին «Ա», «Օ», «Ասիա-1» տիպերի եռա-վալենտ պատ-վաստանյութ	221.44	0.50	161,665.2	313,913	35,799,140.8
10.	ՄԵԿ	պատվաստում սիբիրախտի նկատմամբ	55 շտամի կենդանի, թուլացված պատվաստա-նյութ	14.30	0.50	274245	532518	3921714
11.		ոչխարների բրադզոտի, էնտերոտոքսե-միայի, չարորակ այտուցի և գառների դիզինտերիայի նկատմամբ	խտացված պոլիվալենտ հիդրոքսիդա-լյումինային քառարժեք պատվաստա-նյութ	6.80	5.00	654,009.1	165,827	4,447,261.5
12.	Խոզեր	ժանտախտի նկատմամբ կենդանի, չորացված պատվաստա-նյութ	ժանտախտի նկատմամբ կենդանի, չորացված պատվաստա-նյութ	15.94	1.00	549,815.1	539238	8,764,053.3
13.	Թռչուն-ներ	պատվաստում կեղծ ժանտախտի (Նյու-Քասլի) նկատմամբ	(Նյու-Քասլ) «Հ» շտամի պատվաստա-նյութ	1.50	1.00	2,982,049.5	2,623,349	4,473,074.2
14.	Մեղու-ներ	բուժկանխարգելիչ միջոցառում վարրոատոզի նկատմամբ	մեղուների վարրոատոզ հիվանդության բուժիչ պատրաստուկ «Բիպին»	42	1.00	258000	258000	10836000

Ախտահանիչներ և բուժկանխարգելիչ դեղամիջոցներ						
15.	Կապույտ շիբ	1700.0	կգ	235		399500
16.	Սպիտակ շիբ	2000.0	կգ	300		600000.0
17.	Կաուստիկ սոդա	650.0	կգ	5000.0		3250000
18.	Քլորակիր	600.0	կգ	5000.0		3000000.0
19.	Ֆորմալին	600.0	կգ	2000.0		1200000.0
20.	Փորձանոթ	100.0	հատ	71333		7133300
Ընդամենը						**489,999,934**

7. Կենսապատրաստուկների և ախտորոշիչ միջոցների թույլատրելի խոտանի չափը՝ տուբերկուլին՝ 3 տոկոս, սիբիրախտի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, պաստերելյոզի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, դաբաղի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, խշխշան պալարի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, թռչունների կեղծ ժանտախտի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, բրադզոտի դեմ պատվաստանյութ՝ 3 տոկոս, Ռոզ-Բենգալի հակածին՝ 0 տոկոս:

8. Հաշվարկներում հաշվի է առնված ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից օգնության կարգով տրամադրվող հակադաբաղային 250000 դոզա պատվաստանյութը: Յուրաքանչյուր տարի բյուջետային հայտի ներկայացման ժամանակ հաշվի կառնվեն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական պետական ծառայության կողմից տրված գլխաքանակի տվյալները և օգնության կարգով ստացվող պատվաստանյութերի չափաքանակները:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

9. Ժամանակացույցով սահմանված ժամկետներում անհրաժեշտ չափաքանակներով ձեռք կբերվեն անասնաբուժական պատրաստուկներ, ախտորոշիչ միջոցներ և ախտահանիչներ:

10. Ձեռք կբերվեն 12535,0 կգ ախտահանիչներ, բուժկանխարգելիչ միջոցներ, 100000 փորձանոթներ և կիրականացվեն շուրջ 9594004 գլուխ գյուղատնտեսական կենդանիների պատվաստումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ